ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մեծամոր

22.07.2019թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար - Նինա Թադևոսյանը,
Գնահատողներ՝
Աշխատակազմի գլխավոր մասնագետ - Սարգիս Սահակյանը,
Աշխատակազմի առաջատար մասնագետ - Վարդգես Դաբաղյանը,
Գնումները համակարգող՝
Արտյոմ Գևորգյանը:

«ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Գևորգյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր Մասնակիցների առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա.Գևորգյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակիցների անվանում	Հ/h	Մասնակիցների անվանում
1	«Էլիտ Հիլզ» ՍՊԸ	7	«ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ
2	«Հիդրովերանորոգում» ՍՊԸ	8	«Հարսնաձոր» ՍՊԸ
3	«Սյունիք» ՍՊԸ	9	«Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ
4	«ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՇԻՆ» ՍՊԸ	10	«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ
5	«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ	11	«ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ
6	«Աբակ» ՍՊԸ	12	«Միլաքս Գրուպ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա.Գևորգյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին)՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերի Հավելված N 1-ի /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում/ 3) կետով նշված էր ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու էին թվով 5 աշխատակիցների միջոցով, իսկ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերի Հավելված N 1-ով /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում/ հավելվածով ներկայացված աղյուսակի 2-րդ սյունակի /մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ/՝ ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հավաստող փաստաթղթի տեսակը՝ ինչը չէր համապատասխանում հրավերի պահանջներին:

26.07.2019թ. Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և հանձնաժողովի քարտուղարը www.armeps.am կայքի միջոցով ծանուցեց մասնակիցների վերը նշված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են վերոնշյալ փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելուց հետո գնահատվել են «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր Մասնակիցների առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա.Գևորգյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպություններ				1-ին տեղ զբաղեցնող կազմակերպություն
				անվանումը	գնային առաջարկը			
					արժեքը	ԱԱՀ-ն	գինը	
1	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքի թիվ 8 տանիքի վերանորոգման աշխատանքներ	դրամ	27479134	«Սյունիք» ՍՊԸ	13750000	2750000	16500000	«Սյունիք» ՍՊԸ
				«Միլաքս Գրուպ» ՓԲԸ	14000000	2800000	16800000	
				«Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ	14752450	2950490	17702940	
				«Էլիտ Հիլզ» ՍՊԸ	14770000	2954000	17724000	
				«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ	14900000	2980000	17880000	
				«Հարսնաձոր» ՍՊԸ	15915000	3183000	19098000	
				«Հիդրովերանորոգում» ՍՊԸ	15945614	3189123	19134737	
				«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ	16416667	3283333	19700000	
				«ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ	16500000	3300000	19800000	
				«Աբակ» ՍՊԸ	17416000	3483200	20899200	
				«ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՇԻՆ» ՍՊԸ	19134737	3826947	22961684	
				«ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ	20894250	4178850	25073100	

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Ընթացակարգի շրջանակներում մասնակիցների հետ բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա.Գևորգյան)

4.1 31.07.2019թ. «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակց ճանաչվեց «Սյունիք» ՍՊԸ-ն:

Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած Մասնակցին առաջարկել /ծանուցել/ ներկայացնելու «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա.Գևորգյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Գևորգյան)

«ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-04/19» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 14:30-ին, **ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1 հասցեում**:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Ն. Թադևոսյան
Գնահատող	_____	Ս. Սահակյան
Գնահատող	_____	Վ. Դաբաղյան
Գնումները համակարգող	_____	Ա. Գևորգյան